ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«16» 03 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000024

Ձեռնարկողը՝ ***«Լավ-Սար» ՍՊԸ***
Ք. Երևան, Մաշտոցի 20

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 3-րդ թաղամաս 31/1 և Ա. Միկոյանի 31 հասցեներում նախատեսվող բնակելի շենքերի և ենթակառուցվածքների շինարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000024

< 16 > 03 2020թ.

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 3-րդ թաղամաս 31/1 և Ա. Միկոյանի 31 հասցեներում նախատեսվող բնակելի շենքերի և ենթակառուցվածքների շինարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Լավ Սար» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան

Ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 3-րդ թաղ. 31/1 և Ա. Միկոյանի 31 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում, ինչը բաղկացած է 3 բազմաբնակարան շենքերից և սպասարկման ենթակառուցվածքից: Նախագիծը մշակվել է համաձայն 11.12.2007թ. տրամադրված հ.50/1-Ե-459-1140 նախագծման թույլտվությանը /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/՝ պահպանելով ՀՀ-ում գործող շինարարական և նախագծային նորմերը և շահագործման նորմատիվ պայմանները: Ըստ նախագծման առաջադրանքի, 2009–2013 թվականներին մշակվել է աշխատանքային նախագիծ և կառուցվել է առաջին բնակելի շենքը: Նշված նախագիծը 2008 թվականի նոյեմբերի 18-ին ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության ԲՓ-145 փորձաքննական եզրակացություն:

Սակայն դրանից հետո, ելնելով տարբեր ֆինանսական և տեխնիկական պատճառներից, շինարարությունը դադարել է:

Ներկայում «Լավ Սար» ընկերությունը նախատեսում է շարունակել շինարարությունը և կառուցել մնացած շինությունները, այդ թվում երկու բարձրահարկ բազմաբնակարան շենք, որոնց հասցեներն են Դավթաշեն վարչական շրջան, 3-րդ թաղամաս 31/1 և Անաստաս Միկոյան փողոց 31 հողամաս: Նշված շինությունների համար Երևանի քաղաքապետարանի կողմից 26.03.2019 թ. տրամադրվել է թիվ 01/18.07/2-17579-187 ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում՝ խառը կառուցապատման գոտում: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2.6606հա: Առաջին՝ արդեն կառուցված շենքի մակերեսը կազմում է 0,4931 հա: Երկրորդ և երրորդ՝ կառուցվող շենքերի համար տրամադրվել է նախագծման թույլտվություն, ըստ որի՝ մակերեսը կկազմի 1.616947+0.5506հա = 2,1675 հա: Հեռավորությունը շենքերի միջև 30մ է:

Ամբողջ տարածքի կառուցապատման տոկոսը (կառուցապատվող տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին)՝ մինչև 60%, այս դեպքում՝ մինչև 26606 մ² x 0.6 = 15963.6 մ²:

Հողամասում առկա են քանդման ենթակա 4643մ² մակերեսով արտադրական նշանակության շենք, և 19.1մ² մակերեսով պահակատուն: Նախատեսվում է կառուցել 16 հարկանի 2 բնակելի շենք և եռահարկ հասարակական սպասարկման մասնաշենքի մի համակառույց, որոնք խմբավորվելով ձևավորում են 2 պարփակ ներքին բակ: Բնակելի շենքերի ստորին 2 հարկերը լինելու են ավտոկայանատեղիներ, ինչը զգալի կբեռնաթափի բակային տարածքները ավտոմեքենաներից: Բնակարանները բազմազան են՝ 1-ից մինչև 4 սենյականոց, 1 սենյականոցները՝ միակողմանի, իսկ մնացածը՝ անկյունային կամ միջանցիկ օդահարմամբ:

Բնակելի շենքերի միջև ընկած են բացօթյա կայանատեղեր, բարեկարգված տարածքներ:

Բնակարանների ջեռուցումը իրականացվելու է անհատական կարգով՝ բնակիչների կողմից:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Բնակելի շենքերում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 բալ և ավելի):

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման տոկոսը՝ 40% և ավելի (10642.4 մ²): Կանաչապատման համար նախատեսվում է նաև նոր բուսահողի լիցք, որի կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է կաղնի, գնդաձև ակացիա, հացենի, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ:

Ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցի միջոցով:

Շինարարությունը բետոնի խառնուրդով ապահովելու նպատակով շինհրապարակում տեղադրված է բետոնախառնիչ և երկու ցեմենտի պահեստավորման տարողություն /սիլոս/:

Շինարարության տևողությունը կկազմի 2 տարի՝ երկրորդ շենքի համար, իսկ երրորդ և տարածքի վերջնական բարեկարգման և կանաչապատման համար՝ ևս 2–4 տարի, ինչը կհստակեցվի երրորդ շենքի համար նախատեսվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

Տարածքում առկա են ջրագիծ, կոյուղու ցանց, հոսանքի գիծ, գազատար, որոնք կառուցվել և միացվել են «Վեոլիա ջուր», «ՀԷՑ» և «Գազպրոմ Արմենիա» ընկերությունների ցանցին:

Երկրորդ և երրորդ շենքերի համար գազի միացումները կիրականացվեն բնակիչների կողմից:

Գոյություն ունեցող շինությունների քանդման արդյունքում կառաջանան բետոնային կառույցների, քարի, ապակու և տանիքների թափոններ, որոնց ընդհանուր ծավալը գնահատվում է 720 – 750 մ³ սահմաններում:

Շինարարության ժամանակ ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի, ավազի և գրունտի խոնավացման, բետոնային խառնուրդի պատրաստման, ինչպես նաև աշխատողների խմելու կենցաղային նպատակների համար:

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի խառը կառուցապատման գոտում, ամբողջությամբ կառուցապատված շինություններով և արտադրական հանգույցներով, ուստի այստեղ բուսականություն կամ վայրի կենդանիների բնակատեղիներ չկան, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Շինարարական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի և քսայուղերի պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինաղբը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

- Շինհրապարակում համապատասխան տեղեկատվական վահանակների տեղադրում
- շինարարական տեխնիկայի սպասարկում և կարգաբերում Երևան քաղաքի տեխ.սպասարկման կայանում,
- տրանսպորտային տեղափոխությունները իրականացնել միայն ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել շարժիչների աշխատանքը և անհրաժեշտության դեպքում կարգաբերել կամ վերանորոգել դրանք,
- սիլոսների օդահան խողովակները միացնել ջրային տարողության հատակային մասին, ինչը էականորեն կնվազեցնի ցեմենտի արտանետումները

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել է քաղաքաշինության կոմիտեն:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների

իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Կառուցապատման հետագա գործառույթները իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի 263-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի համաձայն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Լավ-Սար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 3-րդ թաղամաս 31/1 և Ա. Միկոյանի 31 հասցեներում նախատեսվող բնակելի շենքերի և ենթակառուցվածքների շինարարության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Մեսրոպյան